# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Հոկտեմբերի 5-ին, կիրակի. - Դ. կիր. զկնի Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Էջմիածին նաւ փրկութեան, քան զՆոյի մեծին փապան» (Ղազար Ջահկեցի) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 46):

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

***Հոկտեմբերի 12-ին, կիրակի. - Ե. կիր. զկնի Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն» (Հովհ. Ա 1) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 49):

Պատարագի սրբազան խորհրդակատարությունից հետո, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

***Հոկտեմբերի 19-ին, կիրակի. - Զ. կիր. զկնի Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Հայոց բանակի Ուխտի Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշեն աբեղա Սանոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 57):

Հավարտ Սուրբ և Անմահ Պատարագի, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ Արցախյան պատերազմում նահատակված հայորդյաց հոգիների խաղաղության համար:

***Հոկտեմբերի 26-ին, կիրակի. - Է. կիր. զկնի Ս. Խաչի: Գիւտ Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Զի որպէս փայլակն՝ որ ելանէ յարեւելից եւ երեւի մինչեւ յարեւմուտս. այնպէս եղիցի գալուստն Որդւոյ մարդոյ» (Մատթ. ԻԴ 27) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 60):

Պատարագի սրբազան խորհրդակատարությունից հետո Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

***Նոյեմբերի 2-ին, կիրակի. - Ը. կիր. զկնի Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գյուտ արքեպիսկոպոս Նագգաշյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «...մեծի

ողորմութեանդ ոսկե ուռամբ բախեցիր զխորս անդնդոց լուսածն յօրինմամբ հրաշակերտութ... ցիր զՄայր Աթոռն մեր զՍուրբ Էջմիածին...» (Ժամամուտ Ս. Էջմիածնի) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 63):

Հավարտ Ս. Պատարագի, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հայրապետական մաղթանք՝ Նորին Սրբության օծման չորրորդ տարեդարձի առիթով:

*Նոյեմբերի 8-ին, շաբաթ. - Սրբոց հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի եւ ամենայն երկնային զօրացն:*

Այսօր Մայր Տաճարի զանգակատան Ս. Հրեշտակապետաց Խորանի վրա Ս. Պատարագ մատուցեց Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 65):

*Նոյեմբերի 9-ին, կիրակի. - Թ. կիր. զկնի Ս. Խաչի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տաթև արքեպիսկոպոս Ղարիբյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 67):

Պատարագի սրբազան խորհրդակատարությունից հետո, հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի, կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

*Նոյեմբերի 16-ին, կիրակի. - Ժ. կիր. զկնի Ս. Խաչի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արամ եպիսկոպոս Աթաշյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Հայր մեր որ յերկինս...» (Տերունական աղոթք) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 70):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*Նոյեմբերի 21-ին, ուրբաթ. - Ընծայումն Ս. Աստուածածնի երից ամացն ի Տաճարն:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նարեկ աբեղա Ավագյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Անձն իմ ի ձեռս քո յամենայն ժամ» (Սաղմ. ՃԺԸ 109) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 73):

*Նոյեմբերի 23-ին, կիրակի. - Ա. կիր. Յիսնակաց:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Դավիթ արքեպիսկոպոս Սահակյանը: Սրբազան արարողության ընթացքին պատարագիչ Սրբազան Հայրը նաև Ձեռնադրության խորհուրդը կատարեց, որից հետո «Միշտ անշարժ պահեա զաթոռս Հայկազնեայս» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 76):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Նոյեմբերի 29-ին, շաբաթ. - Տօն Սրբոց Առաքելոցն եւ առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի եւ Բարդուղիմէոսի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Հայրապետնեկ այգւոյն իբրեւ պարիսպք եւ բարձր աշտարակք» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 78):

***Նոյեմբերի 30-ին, կիրակի. - Բ. կիր. Յիսնակաց:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Դերենիկ վարդապետ Դավթյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց:

Հավարտ Սուրբ և Անմահ Պատարագի կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն: